պատուական առաջի Աստուծոյ չիք: *21* Եւ զաշխար կամ զկոծ դնել մեռելոց՝ դառն մեղս համարէր, եւ յամս իւր եհատ զայս յերկրէս Հայոց. զի յաւուրս նորա ոչ ոք իշխէր դնել կոծ կամ աշխարանս. այլ յետ մահու նորա անմիտ մարդիկ համարձակեցան զայս գործել: *22* Այլ վասն իմ ոք կոծ մի՛ դիցէ. եթէ դնէ ոք, նա լիցի դատապարտ. այլ ոչ եթէ յետ մահուն իմոյ իմ իշխանութիւն ինչ է սաստել, զի զոր ոչն կամիմ՝ մի՛ արասցեն. այլ ինձ յիշատակ արասցէ որ զիս սիրէ: *23* Ի պատերազմի ի մահուանէ մի՛ երկնչիք, ուր ես ոչ մեռայ. զի առանց Աստուծոյ ինչ ոչ լինի:

24 Զայս եւ զայսպիսի, եւ որ ինչ այս բանից նման են բանք, խաւսեցաւ: *25* Բազում եւ անչափ գանձս աղքատաց եւ կարաւտելոց բաշխէր, իւրովք ձեռաւք մատակարարէր. եւ բազում մասունս յընչից իւրոց տայր յեկեղեցիս եւ ի վկայանոցս, եւ բազում գանձս տայր ցքահանայապետսն[1]. եւ ապա ինքն մեռանէր: *26* Այլ իբրեւ մեռաւ մեծ սպարապետն Մանուէլ, հրամանն զոր տայր յաղագս կոծոյն չդնելոյ՝ այնմ ինչ ոք ոչ անսաց. այլ ամենայն մարդ երկրին Հայոց կոծ եդեալ, մեծաւ աշխարանաւք լային զնա առ հասարակ ազատք եւ շինականք: *27* Զի ամենայն մարդ իբրեւ զհաւրէ ի կարիս առնէին[2] զնմանէ վասն քաղցրութեան մարդասիրութեան հեզութեան հանդարտութեան խնամոտ բարեբարութեան՝ բարէնշան զաշխարհաշէն անձն Մանուէլի: *28* Ամենեքեան բերանաբաց հառաչէին զկնի նորա, կղկղաթ կաթոգի լինէին զիւրեանց քաջ զաւրավարէն, զփրկչէն իւրեանց, զյաղթական զանուանին զարգասուէն[3], յայնպիսոյն հեռացեալ գնացեալ ի յանջատելն ի մեկնելոյն:

1 *Օրինակ մի յաւելու՝* քահանայս եւ պաշտօնեայս

2 *Յօր.* ի կարի առնէին, *ուղղեցաք ըստ* Բ. Մակաբ. Դ. 35. *Թուի ուղղելի.* կախեալ կային

3 *Օրինակ մի յաւելու՝* զարգասութենէն